Ինդէմքս այսոքիկ, անձրեւէ, ցօղէ, կար  
կտէ որոտայ, փայլատակէ, կայծկտէ, ձիւնէ  
և նմանք սոցին, բացարձակապէս դնին, այ  
սինքն ոչ պահանջեն առաջի իւրեանց, կամ  
զկնի իւրեանց, զհօլով ինչ: ուր. յայսմիկ  
առաւօղ ոչ անձրեւեաց: սորա առանց հօլս  
վայ դնին, իբրև անդէմք, իսկ և թէ գիմս  
է որեցուցանիցեմք զնոսմ, զոր առնել կա  
րեմք, յայնմ ամ ոչ միայն առաջի, այլ և զկ  
նի իւրեանց պահանջեն զհօլս: ուրդան.  
ամ ցօղէ ի մեզ զչնորհա իւր, անձրեւէ իմեզ  
զողորմութի իւր, և այլ: եւ ունին զինքեա  
նս, որպէս ունին զինքեանս գիմաւոր բայք  
ուստի որ ինչ զնոցանէ խաւեցեալ է, իս  
սելի է՝ զառցանէ:

Ինդէմքս այսոքիկ, պարտէ պատշաճէ,  
անպատշաճէ, պատահէ, հանգիտի, սգուտ  
է, բաւ է, վայելէ, անվայելուչէ, անկունի,  
հաճոյ է, անհաճոյ է, անփայլի. թուի, հար

կէ, ամօթ է՝, պատկանի, և այլ ք սոյնպիսիք,  
յորժամ անդ իմաւորացէս առնանին, զոր  
ասեմքն ի սոյնն ամանք կարեն դիմաւորա  
նալ, առաջի իւրեանց խնդրեն զանուանա  
կան, կամ փոխանակ անուանականին, զայլ  
մասն բանի, մանաւանդ զանորոշական բայն  
խոյզկնի իւրեանց, պահանջեն զարականն ։  
Հիկեն արդարութի վայելէ ամենեցուն ։  
Գնալն յամօթն հաճոյ եղև իմաստասի  
րաց և այլ ։

Մինչև ցատտ խօսեցաք զհոլովից, զորա  
բայք առնանապէս խնդրեն, Վրդ խօսելի  
ն զայնց, զորահասարակապարար պահանջն ։

Հորժամ լինի կացութի ի տեղւոջ յայն  
ժամ կացողական հոլով ընդ իւրաքանչիւր  
բայի շարակցիլ կարէ ։ Որչան Գնեցի զերե  
վարս ի հրապարակի, խօսեցայ զբաղում ի  
հրապարակի, փրկեցի զամբ ի հրապարակի, և այլ ։

Հորժամ լինի շարժումն առ տեղի, նախ  
դրեւ արականն կարէ շարակցիլ ընդ իւրա  
քանչիւր բայի, որ նշանակէ զշարժումն առ  
տեղի ։ Որչան Գնամ ի տուն, չւեմ ի հա  
տմ, գամ յեկեղեցին, և այլ ։

Հորժամ լինի շարժումն ի տեղւոջն,  
յայնժամ առողական հոլով կարէ շարակցիլ  
ընդ իւրաքանչիւր բայի, որ նշանակէ զշար  
ժումն ի տեղւոջն ։ Որչան Գնեմ ի տունն  
եղանեմ ի բաղն ։ Ի ջնեմ ի վերնատանն և այլ ։



Քնորժամ լինի շարժումն ընդ տեղի յայն  
ժամ կրողականն առանց նախդրիս զ. կարե  
շարակցիլ ընդ իւրաքանչիւր բայի, որ նշա  
նակէ զշարժումն ընդ տեղի. զոր նման  
եանց ընդ ծով, և ընդ ցամաք. անցանեմ  
ընդ հայաստան, և այլ:

Քնորժամ իր ինչ լինի վն ուրուք անձին,  
յայնժամ տրականն, կամ սեռականն հան  
դերձ նախդրիւս, վն. կարե շարակցիլ ընդ  
իւրաքանչիւր բայի. որդան. եւ աշխատիմ  
քեզ. ահա տրականն. եւ աշխատիմ վն քո,  
ահա սեռականն հանդերձ նախդրիւս վն:

Պորժեական հոլով կարե շարակցիլ  
ընդ իւրաքանչիւր բայի, յորժամ ներդոր  
ծութի լինի գործեալ իւրիք. որդան հար  
կանեմ ձեռամբ, աշխատիմ մարմնով, և այլ:

Երբեմն բայք փոխանակ հոլովից, զայլ  
ինչ պահանջեն:

Բայք, որք ունին զնշանակութի սկսանե  
լոյ, կամելոյ, կարելոյ, և այլոց սոյնպիսեաց,  
զկնի իւրեանց պահանջեն զներկոյ անորո  
շական եղանակի. որդան. սկսանիմ ապաշա  
ւել կամիմ գնալ ի հռոմ կարեմ աղօթել:  
և այլ:

Բայք որք ունին զնշանակութի կարծե  
լոյ համարելոյ հաւատալոյ ստորասելոյ բա  
ցակելոյ ուրանալոյ հաստատելոյ և այլոց  
սոյնպիսեաց զկնի իւրեանց պահանջեն զո

ներևոյթն ստորագասեալ կրողականին որ  
պէսզն զկնի կրողականին գիցի աներևոյթն  
զորնման. կարծեմ զքեզ լինիլ իմաստուն  
հաւատամ զանձ գոչ անչափ. և այլ.

Իսկ ք որք ունին զնշանակութի խոստա  
նաւոյ յուսաւոյ և այլոց սոյնպիսեաց սրահան  
քնն զաներևոյթն առանց կրողակնի. որչան  
յուսամ լինելոց գոչ զի երթայցեմ ի հռոմ

Իսկ ք որք ունին զնշանակութի երթա  
լոյ գալոյ չաւոյ և այլոց սոյնպիսեաց զկնի  
խաբանց կարեն առնուլ զաներևոյթն ստո  
րագասեալ նախդրացս այսոցիկ ի առ իս  
որչան. գնամ ի սիրել. գամ առ ի սիրել.

Իսկ քս այսոցիկ կարեն ևս առնուլ զգոր  
ծակալն որ իւրոյ աւարափ զկնի նախդրացս  
այսոցիկ առ ի վն. որչան. գնամ առ ի սի  
րելոյ գամ վն սիրելոյ. և այլ.

Իսկ քս այսոցիկ կարեն ևս առնուլ զանե  
րևոյթն առանց նախդրի. հի՛ զան. եկն յս փր  
կել զարարածս. գնամ ազատել զգերիս և այլ.

Իսկ ք զխտելի է՛ զի գործակալն ոչ այլ ինչ  
է եթէ ոչ հոլովք աներևութին. զի զանե  
րևոյթն ևս սապէս հոլովել կարեմք. հի՛ զան  
սիրել սիրելոյ, ի սիրել զսիրել ի սիրելոյ, զսի  
րելոյ սիրելով զսիրելով. ուստի սիրելն ուղ  
ղական կոչելի է՛ սիրելոյն սեռական, ի սի  
րելն, կամ սիրելոյն տրական, զսիրելն կրո  
ղական, ի սիրելոյն առողական, զսիրելոյն

պատմական խտրելն կաղողական սիրելովն  
գործ իական զսիրելովն պարտաական.

Ի այք որք խնդրեն յառաջկոյս և յետկոյս  
խնդրենց յայնքն յերկուց կողմանց խնդրեն  
զանուականն այսինք զուղղականն անուան.  
կարեն խնդրել յառաջկոյս և յետկոյս իւ  
րեանց զուղղականն աներևութին: որչան  
խնամալն է՝ հասկանալ: և այլ:

Ի այք, որք խնդրեն զսեռականն անուան  
կարեն խնդրել զսեռականն աներևութի.  
որչան. վաճառեմ զքեզ սիրելոյ: որ է ան  
նախիր սեռական: ուրախանամ վն սիրելոյ  
զքեզ: որ է նախգրիւ սեռական: և այլ:

Ի այք, որք խնդրեն զնախգրիւ տրականն  
կարեն խնդրել զնախգրիւ տրականն անե  
րևութին: որքար: առաքեմ զքեզ ի սի  
րել: և այլ:

Ի այք, որք խնդրեն զտրականն տուանց.  
նախգրի, կարեն խնդրել զաննախգիր տրա  
կանն աներևութին: որչան. պատրաստե  
ցայ սիրելոյ: և այլ:

Ի այք, որք խնդրեն զկրողականն, կարեն  
խնդրել զկրողականն աներևութին: որչոն.  
զսիրելն, և զսիրելն սիրեմ: և այլ:

Ի այք, որք խնդրեն զառողականն կա  
րեն խնդրել զառողականն աներևութին: զոր  
նման. հեռացուցանեմ զքեզ ի սիրելոյ և այլ

Ի այք, որք խնդրեն զպատմականն, կա  
րեն

րեն խնդրել զպատմականն աներևութինս  
որդոն. խափմ' զսիրելոյ: և այլ:

Ի այք, որք խնդրեն զգործականն, կա  
րեն խնդրել զգործականն աներևութինս  
հիշան. քնամ սիրելով. և այլ:

Ի այք, որք խնդրեն զպարտականն, կա  
րեն խնդրել զպարտականն աներևութինս  
որդոն. գերազանցիմ' զսիրելով. և այլ:

Ի այք, որք առնուն զկացողականն, կա  
րեն առնուլ զկացողականն աներևութինս  
որդոն 'ի սիրելն ուրախացայ:

Ի ներևութին ուղղականն, և կրողականն  
և կացողականն, և նախդրիւ արականն զայլ  
աւարտ ունին, յորժամ ներգործականք են  
և զայլ աւարտ, յորժամ կրաւորականք են,  
քանզի ներգործականնն կամ, ել, է, կամ,  
այլ, կամ, ուլ. հիկեն. սիրել, բանալ. ըն  
թեռնուլ, զսիրել, զքանալ. զընթեռնուլ  
իսկ կրաւորականնն, իլ, է. հիբար. սիրել,  
բանիլ. ընթեռնանիլ, զսիրել, զքանիլ, զըն  
թեռնանիլ: Բայց յայլ հօլովս ներգործա  
կանին, և կրաւորականին նոյն աւարտ է'.  
զորնմանն սիրելով. որ կարէ առնանիլ կրա  
ւորականապէս, և ներգործականապէս,  
կրաւորականապէս. զորօրինակ, ոչ մեկնե  
լով 'ի հօրէ 'ի մը յայրին բազմեցաւ. ներ  
գործականապէս, որդան. մեկնելով զլարս  
'ի բարեւոյ, աշխատեցայ: և այլ: ոմանք, յոր

Ժամ կրաւորականացէս առնանին, զնէն  
բառնան, և ՚ի տեղի նորա, զինի դնեն. սա  
պէս. մեկնիւով. սակայն ոչ գոյ սովորութիւն  
Հոլովքս այսօրիկ աներևութին, առաջի  
իւրեանց պահանջեն զսեռականն: Երգան.  
՚ի գնալն թագաւորաց ՚ի կոստանդինուպո  
լիս, դղրդեցաւ քաղաքն: Ընդ մտանելն իմ  
յեկեղեցին, բազումք ուրախացան: Երբեմն  
՚ի տեղի սեռականին, դնի ստացական դե  
բանուն, որ հոլովիւ, և թո՛ւով համաձայնի  
ընդ նախդրին հոլովեալ աներևութին.  
Երգան. ՚ի կարգալ իմութ, լուա ինձ ան.  
Իսկ զկնի իւրեանց պահանջեն զնոյն հոլովս  
զոր նոցին բայք պահանջեն: Երգան. ընդ  
գնալն իմ ՚ի կոստանդինուպոլիս, և այլ:

Ճորժամ նշանակի ժամանակ, նորում  
նեղործութի ինչ լինի, կամ եղև, կամ լի  
նեղոց է, կացողական հոլով կարև ընդ իւրա  
քան իւր բայի շարակցիլ: Երգան. յանցեալ  
ամի գնացի ՚ի հռոմ, յայսմիկ տարւոջ կամիմ  
գնալ յերուսաղէմ: ՚ի հանգերնեալ, և յե  
տագոյ տարւոջ մնացից աստ: և այլ:

Ճորժամ նշանակի ժամանակ, նորում  
իր ինչ յամեալ, և մնացեալ է, կամ յամեւոց,  
և մնալոց է, կրօնական հոլով ընդ իւրաքան  
չիւր բայի շարակցիլ կարև: Երգար: զերիս  
ամս մնացի ՚ի կոստանդինուպոլիս, զվեց  
ամ մնացի ՚ի մեծն հռոմ: և այլ:

Բայք, որք ունին զնշանակութի հայցե  
լոյ, կամելոյ, խնդրելոյ, ըղձալոյ, և այլոց սոյն  
սրահաց, զկնի իւրեանց պահանջեն զմաս  
նուկս, զի օրդան. խնդրեմ, զի տայցես  
ինձ զհարկանորս. և այլ.

Բայք, որք ունին զնշանակութի կարծե  
լոյ, և այլ, զկնի իւրեանց կարեն ևս առնուլ  
զմասնուկս, և թէ, օրդան. կարծեմ, թէ ու  
սեալ ևս զանձարանութի.

Բայք, որք ունին զնշանակութի լծորդութե  
բայից, այլ առաքելք զուսումնասէրս առ  
քերականս, զորս այլք շարադրեալ են զուր  
ե և մէք շարադրեսցուք զմին փոքրագոյն  
քերական, նորում ուսուցուք զհոլովմունս  
անունաց, և զլծորդութիս բայից միայն.  
Բայց զայս յետոյ տեսցուք. ուստի բաճակա  
նասցին վերոյստացեալքն զպարագայից  
բայից, և զինքենէ բայի.

Ստանան շորհորդ.

Յողագս ընդունելութե.

Դմասենի պատիկ առնեմ զերկու նկատ  
մունս, յառաջին նկատման, ճառեցից  
զընդունելութե, յերկրորդ նկատման,  
զպարագայից նորին.

Պրակ առաջին.

Թէ զինչից ընդունելութե, և որքա  
նեակ իցն անջատուին նորին.

**Ի**նդունելութիւն ձայն, որ ի միասին նշա  
 նակէ զիրն, և զառնելն կամ զկրելն նո  
 բին. ընդ իւր յամանակաւ. այսինքն. և  
 մասն բանին, որ ի միասին հաղորդի անուան  
 և բայի. զի, ունի ստացաւ, նշանակէ զիր, և  
 ըստ այսմ, հաղորդի անուան, և ի միասին նշա  
 նակէ զառնել, կամ զկրել իրին, և ըստ այսմ  
 հաւասարի, և հաղորդի բայի նմանապէս,  
 հոլովի ուն անուն, և ըստ այսմ հաղորդի, և  
 հաւասարի անուն, ունի զգամանակս ուն  
 բայ, և ըստ այսմ հաղորդի բայի. ուստի  
 յամանց այսպէս սահմանի ընդ ունելութիւն  
 մասն բանի, որ ի միասին ունի զհոլովս, և զգա  
 մանակս որդան. ընթերցող կարդացող և այլ:

**Ի**ւարտք ընդ ունելութեան հինգ, և են  
 սորան, օղ. իչ. եալ. լոց. լի. հիւան. սի  
 բող. սիրիչ. սիրեալ. սիրելոց, սիրելի:

**Ի**եռք ընդ ունելութեան վեց են, ուն և բա  
 յիցն, այսինքն, ոմանք ներգործականք են,  
 ոմանք կրաւորականք, ոմանք չէ զդրականք,  
 ոմանք հասարակք, ոմանք ձայնակրականք,  
 և ոմանք անցողականք են:

**Ի**նդ ունելութիւնք, որք յառաջ գան ի  
 ներգործական բայից, և ունին զաւարտս  
 զայստակ, օղ, իչ, լոց, ներգործականք են:  
 օրդան. սիրող, իմացող, ընթերցող, սիրիչ,  
 իմացիչ, ընթերցիչ, սիրելոց, իմանալոց, ըն  
 թեռնլոց:

Ինդուներու թիւք, որք յառաջ գան 'ի  
ներգործական բայից, և ունին զաւարտս  
զայսոսիկ, եալ, ացեալ, ցեալ, հասարակե  
նն, որդան. սիրեալ, իմացեալ. ընթերցեալ:

Ինդուներու թիւք, որք յառաջ գան 'ի  
կրաւորական բայից, և ունին զաւարտս զայ  
սոսիկ, եցեալ, լի, են կրաւորականք հիշան,  
սիրեցեալ, սիրելի, իմանալի, ընթեռնելի:

Ինդուներու թիւք, որք յառաջ գան 'ի  
չեղորդական բայից, և ունին զաւարտս զայ  
սոսիկ, օղ. իչ, եալ. եցեալ. ացեալ, և լոց,  
չեղորդականք են: արզան. գնացօղ. գնացիչ  
ննջեցեալ, գնացեալ, իջեալ, գնալոց:

Ի թե ուրուք կարիցէ ևս դնիլ այն, որ  
ունի զաւարտս զայս, լի: հիկեն իջանելի,  
եղանելի, և այլ, յայնժամ պարտի շինիլ,  
կամ իմանիլ ընդ ունելական բայ: որդան.  
եղանելի է՝ յերկինս, իջանելի է՝ ի վերնաստա  
նէ: ուստի գիտելի, զի ընդ ունելական բայ  
է՝ այն, որ շինի յընդ ունելութե, որ ունի զա  
ւարտս զայս, լի, և ի բայէ, որ կուչի բայ է ու  
թե, այսինքն, յայսմանէ բայէ, որ այսպէս  
լծորդի, եմ, ես, է, եմք, կք, են, և այլ որ բայ  
ասի է ու թե բայ, կամ գոյացական բայ, զի ի  
մէջ այնց եղերաց, զորս կապէ ընդ միմեանս  
զինն նոյնութի խնդրէ: որդան. յորժամ  
ասի, դու ես իմաստուն. 'ի մէջ դու իդ, և  
իմաստունիդ խնդրի իմն նոյնութի, այլազգ



առւտ լինի ասացեալ բան։ Ուստի ընդունե  
 լական բայ, ուր ասացաւ, այնպէս շինի։ Եւ  
 առաջի իւր խնդրէ զարականն, իսկ զկնի  
 իւր խնդրէ զհօլովս բայի իւրոյ։ Երզանեա  
 նելի է մեզ յերկրէ յերկինս։ Երականս այս  
 մեզ, է արականն ընդունելական բային,  
 այլք երկուք հօլովք, են, ելանեմ, բային։  
 յորժամ ընդունելութիւն, լի, առնանի՝ ի  
 կրաւորական բայէ, ընդունելական բայս  
 կարէ կրաւորականապէս առնանիլ, և խն  
 դրել զկնի իւր զանուանականն։ Երզան  
 սիրելի է՝ մեզ ամ։

Ինդունելութիւնք, որք յառաջ գան ի  
 հասարակ բայից, և ունին զանազան զոյստ  
 սիկ, օղ. իչ. լոց, առաւել ներքործականք  
 են, քանի՞նք կրաւորականք։ Հիշան. ծնող,  
 բղիւղ, ծագող, ծնիչ, բղիւղիչ, ծագիչ,  
 ծնանելոց, բղիւղելոց, ծագելոց. սակայն կա  
 րեն կրաւորականապէս առնանիլ մանաւա  
 նդ. ունեք։ Երզան. ծագող երկնից, բղիւղ  
 յողբերէ, բայց լանագոյն է զսոսաներ  
 գործականապէս առնուլ։

Ինդունելութիւնք, որք յառաջ գան ի  
 հասարակ բայից, և ունին զանազան զոյստ,  
 եւլ, հասարակք են։ Հիշան. ծնեալ. բղ  
 խեալ, ծագեալ, և այլ։

Ինդունելութիւնք, որք յառաջ գան ի  
 հասարակ բայից, և ունին զանազան զոյստ

սիկ, եղեալ, իցեալ, են միայն կրաւորականք  
 հիւար. բղխեցեալ. ծագեցեալ, ծնիցեալ,  
 և այլ, սակայն եթէ գտանիցին բայք, որք  
 ոչ ունին զընդունելութիւն զայս, որ աւար  
 տի յեալ, յայնժամ ընդունելութիւք, որք  
 ունին զաւարտս զայս, ցեալ, հասարակա  
 պէս կարեն տունանիլ, բայց առանիլ կրա  
 ւորականապէս տունանիլ պարտին, քանթէ  
 ներդործականապէս:

Ի նդունելութիւք, որք յառաջ գան 'ի  
 հասարակ բայից, և ունին զաւարտս զայս,  
 լի, միայն կրաւորականք են. որդոն. ծնա  
 նելի, բղխելի, խորհելի, ծագելի, և այլ:

Հաճայնք ընդունելութիւք, որք յառաջ  
 գան 'ի ձայնակրական բայից, ձայնակրա  
 կանք են. որդան. նստող, նստիչ, նստ  
 եալ, նստելոց, և այլ:

Պրակ երկրորդ:

Թ. է ը.ք, և քանիք իցեն պարագայք ըն  
 դունելութեց:

Պարագայք ընդունելութեց են, որք  
 պատկանին ընդունելութեց:

Պարագայք ընդունելութեց են ութ,  
 և են այսոքիկ, տեսակ, ձև, հոլովք, թիւք,  
 ամանակք, բացարձակագրութի, վերլու  
 ծանութի, և հոլովառութի:

Տեսակք ընդունելութեց նմանապէս  
 երկու են, այսինքն ոմանք 'ի յընդունելու

Թեց նախագաղափարք են, և ոմանք ածանցականք: նախագաղափարքն են, որք ունին զինքեանս ուր զարմատս, յորոց այլք բղխեն Տիբար. ուսանող, հնարանդօղ և այլ: ածանցականքն են, որք ի նախագաղափարիցն յառաջ գան: որդան. ուսուցանող. հնարանդեցուցանող. և այլ:

Չեք ընդունելու թեց երեք են, այսինքն ոմանք պարզք են, ոմանք բարդք, ոմանք յարարարդք: պարզք, հիշան, ունող: բարդք հիբար. ընդունող, յարարարդք, որգոն, ներքն գունող, և ալ:

Հոլովք ընդունելու թեց, ուր անունաց, տասն են, այսինքն. անունական, սեռական, տրական, կրողական, կոչական, առողական, գործիական, պատմական, կացողական, պարտական:

Ժիւք ընդունելու թեց երկու են, այսինքն, մինն է եղական: որգոն. երանեալ: միւսն է յոքնական. հիշան. երանեալք:

Վճանակք ընդունելու թեց եթէ փիլիսոփայաբար խօսեցինք, և կարճառօտապէս, երեք են, այսինքն, ներկայն, անցեալն, և ապառնին:

Ի նդունելու թի, որ ունի զաւարտս զոյսօղ, ցամ, իւ, ներկայ է: հիշան. սիրող, սիրելիս եթէ ըստ քերթողաց խօսեցինք, որք ունին զաւարտքս զայսոսիկ, օղ, և իւ, ու

միայն ներկայք են, այլ և անցեալ անկատարք  
որքա եթէ լինիցին անուանք, ընդունին  
զամ ամանակ, բայց ՚ի յստատունսն : ո՞րդոն  
լուսաւորիչ հայոց. որ կարէ իմանիլ այս  
պէս, որ լուսաւորէ զհայս, և այսպէս, որ  
լուսաւորէր զհայս, և այսպէս, որ լուսաւո  
րեաց զհայս, և այսպէս որ լուսաւորեալ է՝  
զհայս, և այսպէս, որ լուսաւորեալ էր  
զհայս, ըստ տեղւոյն : այնպէս լուսաւորո  
ղն, ստեղծողն, և այլ :

Ի՞նչ ունեւոթի, որ ունի զաւարտս զայս  
ացեալ, կամ, եցեալ, կամ, եալ, ունի զան  
ցեալ ժամանակ : հիզան. իմացել, սիրեցել,  
սիրեալ : իսկ եթէ քերթողաբար խօսիցիմք  
սոյնպիսին և է անցեալ կատարեալ, և է  
անցեալ յարակատար, և է անցեալ գերա  
կատար, ըստ տեղւոյն :

Ի՞նչ ութի, որ ունի զաւարտս զայս, լոց,  
է միայն ստատունի. ըստ փիլիսոփայից, և ըստ  
քերթողաց : հիզան. սիրելոց, և այլ :

Ի՞նչ ունեւոթի. որ ունի զաւարտս զայս  
լի. է ապառանի. հիկեն. սիրելի սակայն, լիա  
յորժամ անուն է, ընդ ամ ամանակի շարս  
կցիլ կարէ : ո՞րկեն. սիրելի աշակերտն իմ  
և կարէ իմանիլ ստպէս. այն. զոր սիրեմ. և  
ստպէս. այն. զոր սիրէի. և ստպէս. այն. զոր  
սիրեցի. և ստպէս. այն. զոր սիրեալ եմ. և  
ստպէս. այն. զոր սիրեալ էի. և ստպէս. այն.  
զոր սիրեցից ըստ տեղւոյն : 93 Ի՛նչպար

Բացարձակագրութիւն ընդունելութեց  
 է. ոչ շարակցիլ ընդ ումեք բայի. այսինքն  
 ոչ յենուլ ումեք բայի. այլ բացարձակա  
 պէս գնիլ. ուստի գիտելի. զի ընդունելու  
 թիւ երբեմն է շարակապեալ ընդ գոյական  
 անունն, որ 'ի բանի պահանջեցեալ է յու  
 մեք է բայ է և յայնժամ ընդունելութիւն ընդ  
 գոյական անունն է պահանջեցեալ հօլով  
 ասացեալ բային և դնի յայնմիկ հօլովի, զոր  
 ասացեալ բայն պահանջէ, թէ իցէ հօլով,  
 զոր բայն առաջի իւր պահանջէ, և թէ  
 իցէ հօլով, զոր բայն զինի իւր պահանջէ:  
 Եւ յայնժամ ընդունելութիւն ոչ է՝ ընդարձա  
 կապէս եղեալ, այլ պատկանի ումեք բայի  
 իսկ երբեմն կցեալ է՝ ընդ գոյական անունն  
 որ 'ի բանի չէ պահանջեցեալ յումեք է  
 բայէ, ոչ յառաջկոյս, ոչ յետկոյս, և յոր  
 ժամ այսպէս գնիլ ընդունելութիւն, ստի բա  
 ցարձակապէս եղեալ, և ոչ պատկանի ու  
 մեք բայի, և յորժամ այսպէս գնիլ, ընդ  
 գոյականին իւրում գնի 'ի սեռականի. և  
 'ի հարկէ ինքն ևս է սեռական, եթէ գնիցի  
 զինի գոյականին իւրոյ իսկ եթէ նախորդա  
 սի գոյականին իւրում, ոչ 'ի հարկէ. այլ ի  
 տեղի իւրում. զի ընդունելութիւն կարէ անու  
 անունական. զի այնպէս համաձայնի ընդ  
 գոյականին իւրում. ուր ամական անունն  
 համաձայնի ընդ գոյականին իւրում. որչա՛ն

Ժաղերոյ արեգական, կամ Ժաղեալ արե  
գական, թաղունք երգեն: առտ, Ժաղերոյ  
արեգականդ, է բացարձակ ընդունելութի  
ղի ոչ յառաջ կոյս, և ոչ յետկոյս պահանջի  
ի բայեւ երգեն:

Ճորժամ ընդունելութի պատկանի ու  
մբ. և է նորին անուանական հոլով. գոյա  
կան անունն. ընդ որում կցեալ է ընդունե  
լութի, կարե լինիլ անուանական, և կարե  
լինիլ սեռական: որդան. յարուցեալ Պետր  
ոս, գնաց 'ի գերեզմանն, կամ յարուցեալ  
Պետրոսի, գնաց 'ի գերեզմանն:

Ճորժամ պատկանի բային յետկոյս, կցի  
ընդ գոյական անուն իւրում, ունի ամական  
անուն կցի ընդ գոյականին իւրում: որդան  
եւա զշնորհս աշակերտաց սիրելեաց կամ,  
եւա զշնորհս սիրելի աշակերտաց:

Ս երլութամութի ընդունելութե, է  
լութանել, և բակել զընդունելութի, և այ  
լովք բառիք մեկնել զայն զոր ընդունե  
լութի նշանակե, այնու զի ծանիցուք զզո  
րութի ընդունելութե: որդան. սիրտն նոյ  
եհաս երանութե: որ սապեւ մեկնի. և բա  
ցադրի, այն. որ զամ սիրեք. եհաս երանու  
թե. և այլ:

Հոլովառութի ընդունելութեց, է նո  
ցին հոլովապահանջութի, այսինքն, զանա  
զան ընդունելութիք զզանազան հոլովս պա  
հանջեն զինի իւրեանց:

Հասարակաբար խօսելով, ընդունելու  
թիւք զկնի իւրեանց պահանջեն զհօլովս, զոր  
ս պահանջեն բայք նոցին յորոց յառաջան  
որդան. սիրեցեալն յնյ. սիրողն զան՝ և այլ:

Ի նդունելութիւք, որք ունին զաւարտս  
զայստիկ, օղ, իչ, և բղխեն ի ներգործա  
կան բայից, զկնի իւրեանց ընդունին նաև  
զսեռականն, փոխանակ կրողականին, մանա  
ւանդ յորժամ եղևոյ են անուանք: Բորան  
ուրացող ճշմարտութե, սիրող թշնամեաց,  
լուսաւորիչ հայոց: և այլ:

Ի նդունելութի, որ ունի զաւարտս զայս  
րի, յորժամ կնի անուն, զկնի իւր պահան  
ջե զտրականն, առանց նախդրի: Հիշար.  
սիրելի մեզ և այլ:

Ստուեան հինգերորդ:

Յազադս նախադրութե:

Դմառնի սյամիկ առնեմ զերկու նկատ  
մունս, յառաջումն ճառեցից զնախադր  
ութե, և յերկրորդումն զարարաբայից նորին:

Արակ առաջին:

Թե զինչ իցե նախադրութե, և որքա  
նեակ իցե անջատումն նորին:

Նախադրութի է մասն բանին, որ այլոց  
բանին մասանց առաջադրի, կամ շարա  
սեալ, կամ զատեալ, և հօլովիչ ոչ կարէ:

Իրեք են ցեղք նախադրութեց, այսինքն  
ամանք ի նախադրութեց շարակցին ընդ մա

սունս, որոց սուաջագրին, և ընդ նսսին զմի  
բառ բաղկացուցանեն: Հի՛շուն. ընդ ունին  
սաս, ընդ սնախդ իր է, և է շարակցեալ ընդ  
բայիս, ունիմ, և ընդ նմա զմի բառ բաղկա  
ցուցանէ: ամանք ոչ շարակցին ընդ մասու  
նս, որոց սուաջագրին, այլ զատաբար դնին:  
Հի՛շուն. ընդ աջմէ, ընդ բեզ, և այլ: ամանք  
երբեմն շարակցին, և երբեմն ոչ շարակցին  
զորորինակ: Ընդ ս, որ երբեմն շարակցի, և  
երբեմն ոչ, ունի երկեցան: 'ի վեր. օրդան. ըն  
դ ունիմ, ահա՛ շարակցեալ: Ընդ աջմէ, ահա՛  
զատեալ: և այլ:

Վ, տխդ իրք, որք միշտ շարակցին, և շարտ  
մանին, ենսոքա. ան, աս, առ, փաղ, շար.  
բաղ: շող, համ, համ կնթ. ատոր. վեր. վեհ  
դ. եր. փոխ. արտ. արամ. տար. պար. բակ.  
փար, անդ. ր, հակ, յար, անս, աղս, տըս, զնոյն  
նշանակութի ունին, և է ոչ ունեալ: Հի՛շուն.  
անշնորհ, ապաշնորհ, տըշնորհ. այսինքն,  
զշնորհս շունեցող: փաղս, շարս, բաղս, և  
շաղս, զնոյն նշանակութի ունին, և է այս 'ի  
միասին: օրդան. փաղագրեմ, շարագրեմ,  
բաղագրեմ, և շաղագրեմ, այսինքն 'ի միա  
սին դնեմ: համս, և համս, բերականարար  
զնոյն նշանակութի ունին, և է այս միապէս  
օրդան. համանուն, համանուն, այսինքն նոյ  
նապէս, և միապէս անունս կնթս, և ստորա  
զնոյն նշանակութի ունին, և է այս 'ի նե բոց



Երզան • ենթագրել, ստորագրել, այսինքն  
 'ի ներքոյ գրել • վերս, և վեհս, վնոյն նշանա-  
 կութիւն • Երզան • վերափառ, վեհափառ  
 այսինքն, յայտ փառաւոր: Դերս, և փոխ,  
 ունին զնոյն նշանակութի, և է այս, փոխա-  
 նակ Երզան • Դերանուն, փոխանուն • այսին-  
 քն փոխանակ տնուն: արտս, նշանակեալ  
 տաքս, Երզան • արտագրել, այսինքն, յարտա-  
 քս դնել • տրամս, նշանակեալ այսկողմ, և այն  
 կողմ Երզան • տրամագրել, այսինքն, յայսկո-  
 ղմ, և յայնկողմ պարագայից նիւթը թց դնել,  
 տար նշանակեալ զհեռացութի • Երզան • տա-  
 րագրեմ, այսինքն 'ի հեռագրեմ, որ ըստ կա-  
 տարեալ նշանակութե իւրոյ զնոյն նշանա-  
 կութիւն ունի, զոր ունի բացամբեմն պարա-  
 բակս, փարս, զնոյն նշանակութիւն ունին, և  
 է այս, շուրջ • Երզան • պարառեալ, բակս  
 առալ, փարառեալ, այսինքն, շրջապատեալ  
 և շուրջառեալ: անդրս, և հակս, երբեմն զն-  
 ոյն զօրութիւն ունին, և է այս, դեմ լինիլ:  
 Երզան, անդրադարձ, հակադարձ, այսինքն  
 'ի դեմ և հակառակ կողմ դարձեալ: յարս-  
 զյաւէտութիւն և զհանապազութիւն նշանա-  
 կե • Երզան • յարաշարժ • այսինքն հանապազ  
 շարժեալ և ընդ սոցակցելի է • տա ընթերս  
 որ մօտ լինին նշանակեալ • Երզան • տա ընթեր-  
 գող • այսինքն • մօտ գող • և մօտ լինիլ • և ոչ:  
 Լսիւցիւք, որք միշտ շատեալք գնին, են

սոքա՝ ստորեւ. ի ներքոյ. զկնի. յետ. արտա  
քոյ. թարց. առանց. ըստ. վն. յաղագ. ս. սակա  
աղագ. աւ. փոխանակ. յանկոյս. քան. իբր. և  
իբրաց. մինչ. և. հու. ու. մօտ. մերձ. հանդերձ  
յանդ. իման. դէպ. ի. յ. ց. ն. դ. ով. ու. և այլ.  
որդան ի ներքոյ երկնից. ստորեւ ծառին և այլ.  
1, տես. իբր. որք երբեմն շարակ. ցեալք. և  
երբեմն զատեալք. դնին. ևն սոքա՝ առաջ.  
նախ. ընդ. առ. շուրջ. միջ. թաց. մակ. գեր.  
դէմ. հետ. ներ. առաջի. զհետ. և այլ. որդան  
ընդ. ունիմ. ահա՛ կցեալ. ընդ. քեզ. ահա՛  
զատեալ. և այլ.

Պրակ երկրորդ.

Թե՛ ճշք, և քանիք իցեն պարագայք նա  
խադրութեց.

Պարագայք նախադրութեց են այնք, որք  
պատկանին նախադրութեց.

Պարագայք նախադրութեց երեք են, և  
են այսոքիկ, անհոլովութի տեսակ, և հո  
լովաութի.

1. Անհոլովութին է ոչ կարենալ հոլովի  
և ոչ ունենալ զհոլով.

Տեսակք երկուս են, այսինքն ոմանք նա  
խագաղափարք են, և ոմանք ամանցականք.  
նախագաղափարք են յորոց այլք բղխեն. հի  
շան. առաջ. ամանցականքն են, որք ինախա  
ղաղափարացն բղխեն. հիկէն առաջի և այլ.

Հոլովաութի է հոլովապահանջութի

նոցին, այսինքն զանազան նախդիրք զգա  
նազան հոլովս պահանջեն:

Վ, ախդիրքս այսոքիկ, առաջ, նախ, և  
գեր, յետ խրեանց առնուն զնախդիրքս,  
քան, և զինն նախդրիս այսոքիկ, պահանջեն  
զկրողականն: Երգոն յառաջքոն զյառնան  
նախքան զընթրիս, գերքան զաշխարհ-ևսյլ:

Վ, ախդիրքս, ընդ, հասարակարար խօսե  
լով: յետ իւր, պահանջե զտրականն: Երգան  
խօսիմ ընդ քեզ, գառաւորեմ ընդ ձեզ և  
ընդ աշակերտս իմ: Ընդ սիրելն իմ և ոյլ:

Վ, ախդիրքս, ընդ, յորժամ նշանակե զչոր  
ժամն, պահանջե զկրողականն, առանց նախ  
դրիս, զ' Երգոն: անցոք ընդ հուր, և ընդ  
ջուր: Եւ համբաւս ընդ ամ աշխարհս ևսյլ:

Ի նգոս, յորժամ նշանակե զնոյն զոր նշա  
նակե նախդիրքս, 'ի ներքոյ, պահանջե  
զգործիականն: Երգան: Ընդ հովանեաւ  
թևոց քոց ևսյլ:

Վ, ախդիրքս, ընդ, յորժամ նշանակե զըն  
կողմնեալն, պահանջե զառողականն: Երգ-  
ան: Ընդ աջմէ, ևսյլ:

Վ, ախդիրքս առ հասարակարար խօսելով:  
պահանջե զկրողականն առանց նախդրիս,  
զ' Երգոն: Գնամ առ քաղաքն: Գնաց առ  
նաւ: ևսյլ:

Վ, ախդիրքս, առ, յորժամ նշանակե զմտ  
պահանջե զտրականն: Երգան: Եղե առ նն,

եղէ առ նման, եղէ առ կերական, եղէ  
առ աշակերտս իմ, և այլ:

Սախգիրս, առ յորժամ շարակցի ընդ  
գործակալին, առնու ընդ իւր զնախգիրս,  
'ի սրգան. գնամ առ 'ի սիրելոյ, և այլ:

Սախգիրս, առ յորժամ նշանակէ զնոյն  
զոր նշանակէ նախգիրս, 'ի ձեռն, պահան  
ջէ զգործ խականն: սրգան. խոտեցաւ ւած  
առ եղէ կիւն լիւ մարգարէիւ ընդ մեզ:

Սախգիրս, առ 'ի յորժամ նշանակէ զնոյն  
զոր նշանակէ նախգիրս, 'ի պահանջէ զա  
ռողականն: սրգան. առ 'ի նմանէ:

Սախգիրս, շուրջ, պահանջէ զպարտա  
կանն: սրգան. շուրջ զսեղանով քով:

Սախգիրս, հանգերձ, պահանջէ զգոր  
ծ խականն: հիշան. հանգերձ աշակերտսք,  
գործ խականս կարէ նախագասիլ, այսինքն  
յառաջագոյն դնիլ: հիկէն. աշակերտսքն  
հանգերձ:

Սախգիրս, մինչև, պահանջէ զնախգրիւ  
արականն: սրգան. մինչև յերկինս, մինչև  
'ի ասուն. և այլ:

Սախգիրս ոյստքիկ, քան, և իւրեւ, պահան  
ջն զկրողականն: հիւրար. իմաստաւոյ ոյն քան  
զարխատաւ լմիամիտ իւրեւ զաղաւնի, և այլ:

Սախգիրս ոյստքիկ քաց, և զատ, պահան  
ջն զառողականն: սրկէն քաց 'ի Ալեաթ  
ոսէ. զատ 'ի մեղոյ, և այլ:

Վախճարքս պատրիկ, 'ի մէջ, մակ, 'ի վերայ, զհետ, աշտարայ, զկնի, առաջի, 'ի ներքայ, ստորե, յետ, առանց, թարց, փոխանակ, յանկոյս, 'ի դէմ, յանդիման, վն, յաղագոս, աղագաւ, սակս. և այլք սոյնպիսիք պահանջեն զսեռականն որդան. առանց մեղաց. թարց առաքինութեց. և այլ. աղագաւն միշտ ստորայ. սակ սեռականին իւրումն որդան համբերութե աղագաւ. իսկ սակս ելլեն մն. որդան. որոյ. սակս.

Վախճարքս պատրիկ. հուպ. մերմ. ներդէպ. հետ. և այլք սոյնպիսիք պահանջեն զտրականն. որդան. հուպ նման. և այլն. մատ, և հուպս, և դէպս, երբեմն առնուն զնախդրիւ տրականն. հիկէն մատ 'ի լեւոն. և այլն.

Վախճարքս պատրիկ, յ, և 'ի, զերկուս հոլովս ընդունին, ի՞նչ զտրականն, զառողականն հիզան ելեալ յերկինս, իջեալ յերկնիցդհասցեալ 'ի տուն, եկեալ 'ի տանէ. յ, դնի, յորժամ բառին առաջի գիրն ձայնաւոր է. հիզան. յերկինս. 'ի, դնի, յորժամ բառին առաջին գիրն բաղաձայն է. որդան իջեալ 'ի վերնատանէն. ուր դնի, յ, կարե ևս գնիլ 'ի, որպէսցի յառաջագոյն դնիլի, 'ի, և ապա. յ. հիկէն. իջեալ 'ի յերկնից, և այլն.

Վախճարքս պատրիկ, յ. 'ի. ըն, և ն, առնուն զկացողականն. որդան. նատի յերկինս,

Թայ 'ի տան. Է՝ ներկինս. Է խնայումն ըն  
 բանս. յ. դնի. յորժամ առաջին գիր բառին  
 ձայնաւոր է. 'ի, դնի. յորժամ առաջին գիր  
 բառին բաղաձայն է. ուր դնի. յ. կարէ ևս  
 դնիչ. 'ի, այնպէս. ուր 'ի վեր ստացաւ. որպան  
 է 'ի ներկինս. ն. նմանապէս դնի. յորժամ  
 բառին առաջին գիր ձայնաւոր է. և այնու  
 պատճառաւ. փոխանակ գրոյս յ. դնի գիրս,  
 ն. զի միջնորդութիւն սորան զանազանիցի տրա  
 կանն 'ի կացողականէն. յորժամ առաջին  
 գիր բառին բաղաձայն է փոխանակ գրոյս.  
 'ի, դնի վանդա. ըն. որպէսզի միջնորդութիւն  
 սորին տրականն զանազանիցի 'ի կացողակա  
 նէն. հիշան մեղաւորք տանջին ըն գ. ժ. ռիս  
 բայց սո չէ 'ի սովորուն. ուստի 'ի հարկաւո  
 բուն ժամանակի վարդապետութիւն պահելի է  
 'ի, ախարք երբեմն գնին առ զարդ, և  
 ճոխարանութիւն. այսինքն, նոյն նշանակուի  
 լինի. թէ շարամանիցին ընդ բառի, և թէ  
 ոչ. որքոն. բառնայն, և շարաբառնայն զն  
 ոյն նշանակէն, և սկսն բառնայն առանց  
 նախդրի է. և շարաբառնայն նախդրիւ է.

Ստուան վեցերորդ.

Հաղագս մակբայի.

Ստուանի այսմիկ տրորից զերկու նկատ  
 մունս, յառաջնումն ճառեցից զինքենէ  
 մակբայէ, և յերկրորդումն զպարագայիցնն.  
 Պրակ առաջին.

Թէ զինչ իցէ մակբայ, և ճշգրտեալ  
իցէ անխառն մննարին:

Սակբայ, որ և յաղոց առբայ տաի, և մասն  
բանի, որ ոչ հոլովի, և զնշանակութիւն  
լոց մասանց բանին բացայայտե, և բարորո  
շէ: հիշան. յոյժ խոհեմ, բարւոք խօսե  
ցան, կատարելապէս սիրեցեալ, և այլ:

Ի մակբայից ոմանք ըզմականք են, իմ  
զիզմ նշանակեն: և են այսոքիկ. մարտան.  
երանի, օշթէ, և այլք սոյնպիսիք:

Ոմանք հարցականք են, այսինքն զհարցու  
մն նշանակեն: և են այսոքիկ. էր. վսէր. ըն  
դեր, վն ճյր. ճյր աղագան, որոյ սակա. զի  
արդ, ոն. ոչ ապաքեն. մթթէ. և այլք սոյն  
պիսիք, զոր ուսուսցէ սովորութիւն:

Ոմանք ստորաւանկանք են, իմ, նշանակեն  
զստորաւանկի, այսինքն զայոյաւանկի և են  
այսոքիկ. ոյն. հան. այդպէս. այսպէս. այն  
պէս. և այլք սոյնպիսիք:

Ոմանք հաստատականք են, իմ զաստեղան  
հաստատեն: և են այսոքիկ. ճշմարիտ. սո  
ոյգ. յերանի. արդարեւ լուիլու. իսկ.  
Լմն, և այլք սոյնպիսիք:

Ոմանք բացատականք են, այսինքն բացա  
սեն, և ուրանան: և են այսոքիկ. ոչ. լէ. ոչ.  
իւիք. ոչ բնաւ, ոչ միով իւիք. ոչ եր  
բէք. ոչ բնաւ երբէք:

Ոմանք յերկրայականք են, այսինքն, զեր  
109 կոյու

կոյութի, և զյերկբայութի նշանակեն, այս  
ինքն, ոչ չի ասեն, և ոչ այս ասեն, այլ կախ  
ման: և են այսոքիկ. թուրս. միգուցէ, թէ  
գուցէ. միարդեօք թերևսուրեք. գրեթէ  
և այլք սոյնպիսիք:

|| մանք կրկնականք են, այսինքն, զկրկնելն  
նշանակեն: և են այսոքիկ. դարձեալ, վերս  
տին կրկին, միասնգամ, ևս. այլևս, ևևս  
քանզևս: և այլք սոյնպիսիք:

|| մանք արգելականք են, այսինքն, զար  
գելումն նշանակեն: և են այսոքիկ, մի. մի  
իւրք, քան լիցի, զիսի. զիսիբուրեք, մի  
իւրք եղանակաւ, և այլք սոյնպիսիք:

|| մանք ընտրականք են, այսինքն, զառա  
ւելութի նշանակեն: և են այսոքիկ. մանա  
ւանդ, առաւել յաւելո, առաւելաբար,  
նախապետաբար, և այլք սոյնպիսիք:

|| մանք սաստկականք են, այսինքն, զսասա  
կութի, և զկարկութի նշանակեն: և են այ  
սոքիկ. կարի, յոյժ. խիստ. տիր, յորդ, սաս  
տիկ, ամենաին քնսին, գլխովին քողորովին  
քողորովիմբ. բնաւ. խապտ. և այլք սոյնպիսիք:

|| մանք զստականք են, այսինքն զստան  
ձին լինին նշանակեն: և են այսոքիկ, իրաց  
զստ. որիչ. զստ. ի զստ. առանձին. միայն.  
միմի. ի թագստեան, ի գաղտնիս. գաղտ.  
ի ծածուկ. յայտնապէս, եղակի. երկակի.  
եռակի. քառակի. հնգակի. վեցակի. բազմ.  
ւորակի. և այլ:



Ոմանք ժողովականք են, և հաւաքականք  
այսինքն նշանակեն զ լինիլն 'ի միասին, և են  
այսորիկ. 'ի միասին, միահաղոյն, համդերձ.  
միայնգամայն համայնգամայն, ընդ հանրա  
պէս. առ հասարակ. համակ. բնաւ. ա  
մէն. բովանդակ. և այլք սոյնպիսիք:

Ոմանք նմանականք են, այսինքն զնմանա  
պէս լինիլն նշանակեն. և են այսորիկ. նմա  
նապէս, նոյնպէս, սոյնպէս, դոյնպէս, այն  
պէս, ույ. զորօրինակ. իբրու. իբրեւ. իբրու  
գաղափարաւ. զոր նման. որգոն. որզան. որ  
կէն. որպակ. որբար. հիբար. հիզան. հի  
կէն. հիպէս. և այլք սոյնպիսիք:

Ոմանք յայտականք, և ցուցականք են, այ  
սինքն ցուցանեն և են այսորիկ. ահա. ահաւ  
տակ. ահաւադիկ. ահաւանիկ. աւառիկ.  
աւադիկ. աւանիկ:

Ոմանք ժամանակականք են, այսինքն զժա  
մանակն նշանակեն. և են այսորիկ. երբ. յոր  
ժամ. յոյնժամ. այժմ. այժմիկ. վաղ. երեկ.  
յեռանդ. միշտ. յարաժամ. հանապազ. ցա  
նդ. յաւեժ. այսոր. սերկ. յայտ հետեւ. ընդ  
վաղորդեան. ընդ առաւօտն. առ ժամն,  
առ ժամոյս. տակաւին. մինչև յայժմ. մինչ  
տակաւին. մինչև յայժմ. մինչև երբ. մինչ չև  
մինչդեռ. չևևս. չևդեռ. երբեմն. երբեք  
յայժմոյս 'ի վեր. յետայսորիկ. մինչև ցայս.  
և այլք սոյնպիսիք:

3027


758

Ոմանք տեղականք են, ինչպես ասեցին զտեղի  
 և են այսոքիկ ուր. ասա. այդ. ր. անա. անդ.  
 ասա անսոր. այդ. անսոր. անտանսոր. ուստի. աս  
 տի. ասա ուստ. այդ. և այդ. րուստ. անտի. ան  
 տուստ. անդ. բեն. ուրու. բեք. այլու. բեք. ամե  
 նայնու. բեք. բարձր. 'ի վերայ. 'ի ներքայ. 'ի  
 վեր. 'ի վայր. վերուստ. 'ի վայր. մինչև յանտ.  
 մինչև յաստ. հեռ. և. ար. մերձ. հուս. և  
 մատ. գ. խմաց. յանդ. խման. արտաքս. ներ  
 քս. 'ի ներս. և այլք սոյնպիսիք.

Ոմանք գ. ասականք են, այսինքն նշանակեն  
 զգ. ասա. և են այսոքիկ. նախ. յառաջ. յառա  
 ջոյ. երկրորդ. երրորդ. չորրորդ, հինգե  
 րորդ. միշտ միօջև. և այլք սոյնպիսիք.

Ոմանք քանականք են, այսինքն նշանա  
 կեն զքանակութի. և են այսոքիկ. միանգամ.  
 երկիցս. երիցս. քառիցս. բազում անգամ.  
 քանիցս անգամ. այսքանիցս. քանի. այսքանի  
 որքան. որչաք. այսքան. այսչափ. այդքան.  
 այդչափ. այնքան. այնչափ. շատ. սակաւ.  
 փոքր ինչ. սակաւ ինչ. սակաւ իկ. նուաղ.  
 առաւել. կամաց. սակաւ. սակաւ. սակաւ  
 ինչ յառաջագոյն. սակաւ ինչ նուաղա  
 գոյն. և այլք սոյնպիսիք.

Ոմանք արագականք են, այսինքն զարտ  
 գ. ասի. և զշուտութի նշանակեն. և են այ  
 սոքիկ. փութով. շուտ. ստեպ. շուտով. յիմ  
 լե փոյթ. վաղվաղ. փութանակի. վաղվաղակի  
 սգույ. կանխաւ.



Ոմանք որպիսականք են, այսինքն զորպիս  
սուլթի նշանակեն: սորա զեօթն աւարտս  
ունին: և են այսոքիկ. պէս, զորօրինակ. բա  
րեպէս: բար. որդան. առաքինաբար. օրէն:  
զորնման. ածաբանօրէն. երգէ. որդոն.  
լատիներէն: ակի. Տիգան. անկարծակի.  
աջի. դպակ. աքացի. ոք. որբար. բարւոք.

Պրակ երկրորդ:

Թ. Ե. ղ. ք, և քանիք իցեն պարագայք մակ  
բայից:

Պարագայք մակբայից այնքեն, որք պատ  
կանին մակբայից:

Պարագայք մակբայից չորք են, և են  
այսոքիկ. տեսակ. ձև, անհոլովուլթի. և  
եղանակապահանջուլթի:

Տեսակք երկուք են, այսինքն. ոմանք  
նախագաղափարք, և ոմանք ածացականք:

Նախագաղափարքն են, որք են իբրև  
արմատք 'ի մէջ մակբայից: որդան. երբ.  
առաւել. և այլ:

Ըծանցականքն են, որք 'ի նախագաղա  
փարացն ելանեն, և ածանցին. որդան. եր  
բեմն. առաւելաբար. և այլ:

Չէք երեք են, այսինքն, ոմանք պար  
զք. ոմանք բարդք, ոմանք յարաբարդք:

Պարզքն են, որք չեն կցեալք. որդան.  
ներքս. և այլ:

Բարդէքն են, որք կցեալք են. որդոն.  
ներադրաբար: և այլ:

Յարաբարդքն են, որք դարձեալ կցեալ  
են. որդան. ներտրամադրաբար: և այլ:

Ընհոլովութիւն. է ոչ կարել հոլովիլ.  
եղանակահանջութիւն է պահանջել զեղա  
նակ: մակբայքս, մարտան, երանի, օջթէ,  
պահանջեն զըղձականն:

Ստեան եօթներորդ:

Յաղագս միջարկութե:

Դ մատենի յայսմիկ արարից զերկու նկատ  
մունս, յառաջնումն ճառեցից զմիջար  
կուէ, և յերկրորդումն զպարագայիցնորին:

Պրակ առաջին:

Թէ զինչ իցէ միջարկութի, և որքանեակ  
իցէ անջատումն նորին:

Միջարկութիւն է ձայն, որ նշանակէ զու  
րախական, կամ զտրտմական ախտակ  
րութիւն մարդկան, այսինքն զախտս մարդ  
կան: ձայնք, որք զախտակրութիւն մեր  
նշանակեն, միջարկութիւք ասին, զի 'ի խօ  
սիւն, և 'ի յարտաբերելն զայլս մատուս  
բանին, զսոսա 'ի մէջ արկանեմք:

Ի միջարկութեց ոմանք զարմացականք  
ասին, այսինքն նշանակեն զզարմացումն: և



են այսոքիկ: ո՞. ի՛հ: բաճե:

Ոմանք հեշտականք են, այսինքն, զհեշտութի, և զխնդութի նշանակեն: և են այսոքիկ: վա՛շ. յայ:

Ոմանք հենգականք, և կատակականք են այսինքն, զկատակելն նշանակեն: և են այսոքիկ: յե՛հ. ա՛հ. վա՛հ. ի՛ղ

Ոմանք տրտմականք են, այսինքն, զտրտմութի. և զցաւ նշանակեն, և են այսոքիկ եհ. ըհ. ըհե. հը. ի:

Ոմանք եղկականք, և լալականք են, այսինքն, զողբ, և զլաց նշանակեն, և են այսոքիկ: հայ. աւաղ. եղուկ:

Ոմանք սպառնականք են, այսինքն սպառնալեօք ՚իբաց վանելն, և ՚իբաց վարելն, այսինքն ՚իբաց մերժելն նշանակեն: և են այսոքիկ: տիր. իշտ. տի. օնև օն:

Ոմանք աշխատականք են, այսինքն զաշխատելն, և զվատակիլն նշանակեն: և են այսոքիկ: յեք. ջեք:

Ոմանք աւաղականք, և ամփոսականք են այսինքն, զգթալն, և զամփոսալն նշանակեն և են այսոքիկ: ախ. ուխ. ո՛հ. վախ.

Ոմանք մորմոքականք են, այսինքն, զառտկազին ցաւ, և տոչորումն նշանակեն: և են այսոքիկ: ի՛շ. ու՛հ:

Պրակ երկրորդ :

Թե՛ ո՛յք, և բանիք իցեն պարագայք միջարկութեց :

Պարագայք միջարկութեց են այնք, որք պատկանին միջարկութեց :

Պարագայք միջարկութեց երկու են, և են այսոքիկ • անհոլովութի, և հոլովապահանջութի :

Ինհոլովութին, է՛ ոչ կարելն հոլովել • ուստի միջարկութին ասի անհոլով մասն բանին :

Հոլովապահանջութին, է՛ պահանջել՝ զհոլով • այսինքն • գտանի միջարկութի, որ զլինի իւր պահանջիցէ զհոլով :

Միջարկութիքս այսոքիկ • ոհ • և վայ զլինի իւրեանց պահանջեն զտրականն • հի՛ զան • ոհ ցաւոյս : վայ ինձ մեղաւորիս :

Սատեան ութերորդ :

Պրակ առաջին :

Թե՛ զի՛նչ իցէ շաղկապ, և որքանեակ իցէ անջատումն նորին :

Շաղկապն է՛ մասն բանին, այսինքն, ճայն որ զայլս մասունս բանին կապէ, և զսացունածս կարգաւորէ :

Ի՛ շաղկապից ոմանք շաղկապականք են այսինքն, որպէսզի բոլոր լիակատար բանն ճշմարիտ իցէ, նա և մասունք ն՞ իւրաբանի

բանչիւրք պարտին գոլ՝ ճշմարիտք, 'ի ձե  
ւն շաղկապից, որովք կապին: և են այսո  
րիկ, և. ևս. նաև իբրև, որպէս. այսո  
հետև, յետայսորիկ, ապա, ոչ միայն:

||մանք տրոհականք են, այսինքն. որպէս  
ի բոլոր լիակատար բանն իցէ ճշմարիտ,  
է՛ հարկ, զի իւրաքանչիւր մասն նորին  
ճշմարիտ իցէ, այլ բաճական է, թէ մինն  
իցէ ճշմարիտ. և այս լինի զօրութիւն տրո  
հական շաղկապի. որպէսզի, եթէ այսպէս  
ոչ լիցի, աճերիցի բնութիւն տրոհական շաղ  
կապի. և են այսօրիկ. կամ, կամ թէ, և  
ոչ. քան:

||մանք ընդդիմականք են, այսինքն առ  
են, զի բանք, ընդդիմանայցեն: որ ընդ  
դիմութի ոչ լինէր, եթէ սոյնպիսի շաղ  
կապք ոչ դնեին: և են այսքիկ. բայց. այլ  
սկ. արդ. իսկարդ, այլարդ, ոչ թէ, թէ  
լէտ. սակայն. բայց սակայն. այլսակայն:  
որօրինակ. իմաստուն եղև սողոմոն, բայց  
սրացա՛ւ: աստ առաջին նախադասութիւն  
ովէ զսողոմոն, իսկ շաղկապս, բայց, ընդ  
դիմանայ, և ոչ թողու, զի առա՛ւել գովիցի  
||մանք թէականք են, այսինքն առնեն,  
ի մին բանն միւսոյն թէութիւն իցէ: և  
այսօրիկ, եթէ. թէ. ապաթէ. թէ ոչ  
թէ ոչ: հիշան. եթէ մեռանիս արդար  
սակիս յմայ:



||մանք պատճառականք են, այսինքն առ  
նեն. զի մին բան իցէ պատճառ միւսոյն  
և են այսոքիկ. քանզի. վասնզի. զի. թէ  
զիմի. որպէսզի. մինչզի. այնուզի. զիտը  
դեօք. վասնորոյ, որոյ սակս, յաղաքս որոյ,  
վասն այսորիկ. սակս այդորիկ. յաղաքս  
այնորիկ. վասն այնորիկ զի: զորնման. քան  
զի նք ես, արժանի ես պատուոյ, և այլ:

||մանք մակաբերականք են, այսինքն առ  
նեն, զի մին բան 'ի միւսոյն մակաբերիցի  
և են այսոքիկ. ապա. արդ. ուրեմն. արդ.  
ուրեմն: ապաուրեմն. ապաքէն: զորորի  
նակ: նք ես: ուրեմն պատուելի ես:

||մանք մեկնականք են, այսինքն, մեկնեն  
զասացեալ բան այլով բանիւ: և են այսո  
քիկ. այսինքն, իբրեւ:

Պրակ երկրորդ:

Թէ ոյք, և քանիք իցեն պարագայք  
շաղկապից:

Պարագայք շաղկապից են այնք, որք պատ  
կանին շաղկապից:

Պարագայք շաղկապից երկու են. այ  
սինքն, անհոլովութի, և եղանակապահան  
ջութի:

Ընհոլովութին է ոչ կարել հոլովել  
ուստի սա ևս անհոլով է:

Եւ զանակապահանջութիւնն է պահան



Յէլ զմին 'ի հինգ եղանակաց բայից :

Ե աղկապքս այսոքիկ, որպէս զի, մինչ զի  
զի. այնուզի, և այլք թոյնպիսիքն պահան  
ջեն զստորադասական եղանակ : հինգան .  
աղաչեմ, զի առնիցես : և այլ :

Օ վերոյ ասացեալ մասունս բանին շարս  
կցել ընդ միմեանս ըստ կանոնաց, զորս  
տունաք, շարադրութի ասի :

Երեք տառքս այսոքիկ, ս. դ. ն. յօդք  
ասին, և դնին զկնի անունաց, և, ս. առա  
ջի դիմի պատկանի, և զնոյն զօրութի ու  
նի. այս : դ. երկորդ դիմի պատկանի, և  
զնոյն զօրութի ունի, թէ, այդ : ն. երր  
որդ դիմի պատկանի, և զնոյն զօրութի  
ունի, թէ այն. ոմանք զսոսա զմին մասն  
բանի առնեն. և ասեն թէ ինն են մաս  
ունք բանին :

## ՈՒՆԻՐՔ

առաջին հատորին, այսինքն քերականութի

Յանկ քերականութե:

Բառաբանութի քերականութե:

Պրակ առաջին: Լճոք եօք շահաւոր իցե  
քերթողական արհեստ: 10

Պրակ երկրորդ: Լճոք կատարեալ, և  
իմաստուն վարդապետք կարիցեն վերա  
դրել զիր ինչ շինեալ քերականութե: 19

Բնձեռումն յառաջին: Ճաղագոս գրոյ:

Պրակ առաջին, թէ զինչ իցե գիր: 24

Պրակ երկրորդ: Թէ ոյք, և քանիք իցեն  
պարագայք գրոց: 26

Բնձեռումն երկրորդ յաղագոս վանգի:

Պրակ առաջին, թէ զինչ իցե վանգ: 30

Պրակ երկրորդ: Թէ ոյք, և քանի իցեն  
պարագայք վանգի: 31

Բնձեռումն երրորդ: Ճաղագոս բառի:

Պրակ առաջին: Թէ զինչ իցե բառ: 34

Պրակ երկրորդ: Թէ ոյք, և քանի իցեն  
պարագայք բառից: 36

Բնձեռումն չորրորդ: Ճաղագոս բանի:  
Թէ զինչ իցե բան: 37

Սատեան առաջին: Ճաղագոս անունան:

Պրակ առաջին: Թէ զինչ իցե անուն, և  
որքան իցե անջատումն նր: 40

Պրակ երկրորդ: Թէ ոյք և քանիք իցեն  
պարագայք անունանց: 50

Սատեան երկրորդ: Ճաղագոս դերանունան  
Պրակ առաջին: Թէ զինչ իցե դերանուն,

և որքանեակ իցէ անջատումն նր: 61  
 Պրակ երկրորդ: Թէ ոյք, և քանիք իցեն  
 պարագայք դերանուան: 63  
 Սատեն երրորդ: Յաղագս բայի:  
 Պրակ առաջին: Թէ զինչ իցէ բայ, և  
 որքանեակ իցէ անջատումն նորին: 66  
 Պրակ երկրորդ: Թէ ոյք, և քանիք իցեն  
 պարագայք բայից: 69  
 Սատեան չորրորդ: Յաղագս ընդունելու  
 Պրակ առաջին: Թէ զինչ իցէ ընդունե  
 լուծի և որքանեակ իցէ անջատումն նր: 92  
 Պրակ երկրորդ: Թէ ոյք, և քանիք իցեն  
 պարագայք ընդունելուծե: 96  
 Սատեան հինգերորդ: Յաղագս նա  
 խադրուծե:  
 Պրակ առաջին: Թէ զինչ իցէ նախադր  
 ուծի, և որքանեակ իցէ անջատումն նր: 101  
 Պրակ երկրորդ: Թէ ոյք, և քանիք իցեն  
 պարագայք նախադրուծեց: 104  
 Սատեան վեցերորդ: Յաղագս մակբայի:  
 Պրակ առաջին: Թէ զինչ իցէ մակբայ, և  
 որքանեակ իցէ անջատումն նր: 109  
 Պրակ երկրորդ: Թէ ոյք, և քանիք իցեն  
 պարագայք մակբայից: 113  
 Սատեան եօթներորդ: Յաղագս միջար  
 կուծե:  
 Պրակ առաջին: Թէ զինչ իցէ միջարկու  
 լի, և որքանեակ իցէ անջատումն նր: 114



Պրակ երկրորդ : Թէ ոյք , Լքանիք իցեն  
պարագայք միջարկութեց : 116

Սատեան ութերորդ : Յաղագս շաղկապի  
Պրակ առաջին : Թէ զինչ իցե շաղկապ,  
և որքանեակ իցե անջատումն նր : 116

Պրակ երկրորդ : Թէ ոյք , Լքանիք իցեն  
պարագայք շաղկապի : 118

---

Ինուն : 40

Բաջարանութի : 9

Բայ : 66

Բան : 37

Բառ : 34

Գիր : 23

Դերանուն : 61

Բնդունելութի : 92

Սակբայ : 108

Սիջարկութի : 114

Լախագորութի : 101

Շաղկապ : 116

Պարագայք անոճան : 50

Պարագայք բայի : 69

Պարագայք բառի : 36

Պարագայք գրոյ : 26

Պարագայք դերանոճան : 63

Պարագայք ընդունելութի : 92

Պարագայք մակբայի : 113

Պարագայք միջարկութի : 116

|                       |     |
|-----------------------|-----|
| Պարագայք նախադրութի : | 104 |
| Պարագայք շաղկապի :    | 118 |
| Պարագայք վանդի :      | 31  |
| Սանդ :                | 30  |
| Քերականութի :         | 23  |



